

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

26 հունիսի 2018 թվականի թիվ 1

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կենտրոնական բանկը վերաֆինանսավորող վարկային կազմակերպություններից ստացել է դիմումներ հետևյալ հարցադրմամբ՝

Արդյո՞ք վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների (այսուհետ՝ ՎԿԿ) նկատմամբ կիրառելի է «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետը, քանի որ Օրենքի կարգավորման առարկայից և Օրենքով կարգավորվող նորմերից միանշանակ չէ ՎԿԿ նկատմամբ Օրենքի կիրառության ոլորտը:

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը նշված հարցադրմանը պարզաբանում տալու նպատակով կարևոր է համարում Օրենքի հետևյալ դրույթների իմաստների վերհանումը՝

Օրենքի 1-ին հոդվածի համաձայն այդ օրենքը կարգավորում է ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից **ֆինանսական կազմակերպությունների դեմ հաճախորդների ներկայացրած մասնավոր իրավահարաբերություններից բխող պահանջների քննության կարգը:**

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն այդ օրենքում օգտագործվող հետևյալ հիմնական հասկացություններից են՝

- կողմեր՝ ֆինանսական համակարգի հաշտարարի քննությանը պահանջ ներկայացրած **հաճախորդը և կազմակերպությունը**, որի դեմ ներկայացվել է պահանջը.

- հաճախորդ՝ **ֆիզիկական անձ, որն օգտվում է կազմակերպության ծառայություններից կամ դիմում է դրանցից օգտվելու համար:**

- պահանջ՝ **ֆինանսական համակարգի հաշտարարի քննությանը հաճախորդի կողմից կազմակերպության դեմ ներկայացվող պահանջ:**

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն ֆինանսական համակարգի հաշտարարը իրավասու է քննելու այն պահանջները, որոնք ներկայացվում են **հաճախորդի կողմից կազմակերպության դեմ, կապված են կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ:**

Բացի նշված դրույթներից, հարցի պարզաբանման համար կարևոր է ՎԿԿ հասկացության և դրանց գործառնությունների վերհանումը: Մասնավորապես՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 347-Ն որոշման համաձայն ՎԿԿ են համարվում այն վարկային կազմակերպությունները, որոնց հիմնական գործունեությունը բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի վերաֆինանսավորումն է:

Նույն իրավական ակտի համաձայն ՎԿԿ-ին արգելված է ֆիզիկական անձանց ծառայություններ մատուցել, ինչն օբյեկտիվորեն բացառում է դրանց Օրենքի իմաստով հաճախորդ ունենալուց:

Վերը նշված կարգավորումների ներքո Օրենքի տառացի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ՝

1. Օրենսդրությամբ ՎՎԿ-ները սահմանափակված են ֆիզիկական անձանց ծառայություններ մատուցելու գործառնությունների մեջ և հետևաբար դրանք չեն կարող ունենալ ֆիզիկական անձ հաճախորդներ.
2. Օրենքի կարգավորման ոլորտը ֆինանսական կազմակերպության և հաճախորդի մասնավոր իրավահարաբերությունից բխող պահանջի քննություն է, իսկ այս դեպքում ՎՎԿ և հաճախորդի միջև մասնավոր իրավահարաբերությունը բացակայում է.
3. Հաճախորդ և ՎՎԿ մասնավոր իրավահարաբերության բացակայության հիմքով չի կարող առկա լինել վեճ ՎՎԿ և հաճախորդի միջև, և, հետևաբար, Ֆինանսական համակարգի հաշտարարը օբյեկտիվորեն չի կարող քննել ՎՎԿ նկատմամբ պահանջ:
4. Օրենսդրությամբ սահմանափակված լինելու պատճառով պահանջի բացակայության և ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից պահանջի քննության բացակայության պայմաններում ՎՎԿ չպետք է վճարեն Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին:
5. Նշված պարզաբանումը ՎՎԿ նկատմամբ կիրառելի է սույն թվականի հունվարի մեկից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ֆինանսական համակարգի հաշտարարին վճարվող պարտադիր վճարները տարեկան են՝ ըստ հավասարաչափ չափաբաժիններով եռամսյակային բաշխվածությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-44-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Պաշտոնապես պարզաբանում է

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը չի տարածվում վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների վրա:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

Արթուր Զավադյան

2018 թ. հուլիսի 4
Երևան